ԲՄԿ ՊՈՒՀ ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատում եմ՝

Իրավունքի Ինստիտուտի տնօրեն

Մ. Ա. Քալաշյան.

«04» հունիսի 2025 թ.

Ինստիտուտ՝ Իրավունքի

Ամբիոն՝ քրեական իրավունքի և քրեական դատավարության

Հեղինակ՝ ի.գ.թ., Սուքիասյան Վ. Հ.

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց՝ «Տուժողի իրավունքները քրեական դատավարությունում (HELP)»

Մագիստրոս կրթական ծրագիր՝ 042101.04.7

«քրեական իրավունք և դատավարություն»

Դասիչ մասնագիտություն՝ 042101.00.7

Անոտացիա

Վերջին տասնամյակներին տուժողների իրավունքների ճանաչումը և պաշտպանությունն ստացել են կարևոր ինստիտուցիոնալ զարգացում: Տուժողի՝ որպես քրեական արդարադատության համակարգի կարևոր դերակատարի իրավունքների պատշաճ ապահովումը նպաստում է արդարության արդյունավետությանը և հանրային վստահությանը: Դասընթացը նպատակ ունի ուսանողներին ծանոթացնել միջազգային և ազգային իրավական ակտերին, որոնք սահմանում են տուժողի կարգավիճակը, իրավունքները, իրավունքների սահմանափակումների սահմանները և պաշտպանության մեխանիզմները:

Դասընթացի նպատակը և խնդիրները

Նպատակ՝
Ձևավորել գիտելիքներ տուժողի դատավարական կարգավիճակի վերաբերյալ՝ ընդգրկելով միջազգային իրավական ակտերը, ԵՄ և ՄԻԵԴ փորձը, ինչպես նաև ՀՀ ներպետական մեխանիզմները:

Խնդիրներ՝

- Ուսումնասիրել տուժողի կարգավիճակի սահմանումը քրեական դատավարությունում
- Դիտարկել մարդու իրավունքների խոցելիության հիմքերը և երկրորդային վիկտիմիզացիայի ռիսկերը
- Բացահայտել իրավական ու հոգեբանական գործոնները, որոնք ազդում են տուժողի մասնակցությանը
- Ձևավորել գործնական կարողություններ՝ պաշտպանական մեխանիզմների և քաղաքացիական հայցի ներկայացման գործընթացում

Դասընթացի օբյեկտը և առարկան

- **Օբյեկտ՝** Տուժողի և քրեական դատավարության սուբյեկտների միջև առաջացող քրեադատավարական հարաբերություններ:
- **Առարկա՝** Տուժողի դատավարական կարգավիճակը, իրավունքներն ու երաշխիքները ՀՀ և միջազգային քրեական արդարադատության համատեքստում:

Դասընթացի մուտքային պահանջները

Ուսանողը պետք է տիրապետի քրեական իրավունքի և քրեական դատավարության բազային գիտելիքներին (բակալավրիատի մակարդակում), ունենա ընդհանուր պատկերացում մարդու իրավունքների միջազգային պաշտպանության համակարգի, ինչպես նաև միջազգային պայմանագրերի ներպետական կիրառման սկզբունքների վերաբերյալ:

Դասընթացի յուրացման արդյունքում ձեռք բերվող գիտելիքները և կարողությունները

Դասընթացի յուրացման արդյունքը ապահովում է անհրաժեշտ գիտելիքների, հմտությունների ու կարողությունների համապատասխան ՈԱՇ-ի վերջնարդյունքներին:

Ձեռք բերվող կարողություններ

Գիտելիքները՝

- Կրիտիկական մտածողություն և խնդիրների վերլուծություն
- Նախագծային և կիրառական հմտություններ
- Միջմշակութային հաղորդակցություն

Հմտությունները՝

- Իրավական մտածողության զարգացում
- Տեղեկատվության գաղտնիության ապահովում

Կարողունակությունը (կոմպետենցիան)՝

- Իրավական ակտերի ճիշտ մեկնաբանում
- Գիտահետազոտական վերլուծություն և առաջարկությունների մշակում

Դասավանդման եղանակները և մեթոդները

Մեթոդներ՝
Լեկցիաներ, սեմինարներ, իրավիճակային խնդիրների լուծում, դեպքերի վերլուծություն, աշխատանք փաստաթղթերի հետ:

Վերահսկման ձևեր՝

- Գրավոր աշխատանքներ
- Թեմատիկ քննարկումներ
- Ինքնուրույն աշխատանքների ներկայացում
- Վերջնական ատեստացիա (առանց քննության)

Դասընթացի տեղն ուսումնական ծրագրում

Դասընթացը ներառված է քրեական իրավունքի և դատավարություն

ակադեմիական կրեդիտ (108 ակադեմիական ժամ) աշխատատարությամբ, որից 16 ակադեմիական ժամ նախատեսվում է գործնական պարապմունքների համար: Դասընթացը նախատեսվում է ուսումնասիրել …1. ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում:

Ուսումնական աշխատանքի տեսակները	Ընդամենը, ակադ. ժամեր
1. Առարկայի ուսումնասիրման ընդհանուր աշխատատարությունն, այդ թվում՝	108
1.1. Լսարանային պարապմունքներ, այդ թվում՝	32
1.1.1. Դասախոսություններ	16
1.1.2. Գործնական պարապմունքներ, այդ թվում՝	16
1.1.2.1. Ստուգողական աշխատանքներ	
1.2. Ինքնուրույն աշխատանք, այդ թվում՝	72
1.2.2. Ինքնուրույն աշխատանքի այլ տեսակներ, այդ թվում՝(նշել)	49
1.2.2.1. Գրավոր ինքնուրույն աշխատանքներ	27
Ամփոփիչ ստուգում (քննություն, ստուգարք)	ստուգարք

Դասընթացի ծավալի բաշխում (ակադեմիական ժամերով) ըստ թեմաների և ուսումնական աշխատանքի տեսակների

Թեմատիկ պլան և բովանդակություն

Առարկայի բաժինները և թեմաները	Ընդամենը	Դասախոսո ւ-թյուններ	Գործնական / Սեմինար պարապմունքներ
1	2=3+4	3	4
Թեմա 1 Տուժողի աբանական և իրավական հիմնավորումները	13	2	2

Թեմա 2.Տուժողի դերը քրեական դատավարությունում	13	2	2
Թեմա 3.Խոցելի տուժողներ և երկրորդային վիկտիմիզացիա	13	2	2
Թեմա 4. Միջազգային և համադրողական փորձ	13	2	2
Թեմա 5. Քաղաքացիական հայցը քրեական գործի շրջանակում	13	2	2
Թեմա 6. Տուժողի իրավունքները ՄԻԵԴ պրակտիկայում Թեմա 7. Գործնական վարժանքներ և սեմինարներ	13 15	2 2	2 2
Թեմա 8. Ինքնուրույն աշխատանք	15	1	1
Ընդամենը	108	16	16

Դասընթացի թեմաների բովանդակությունը

Թեմա 1.Տուժողի իրավական հիմնավորումները

Միջազգային և ներպետական կարգավորումներ, «տուժող» և «զոհ» հասկացությունների համեմատություն

Թեմա 2 Տուժողի դերը քրեական դատավարությունում

Իրավունքներ և պարտականություններ, միջնորդություններ, վերաքննիչ իրավունքներ

Թեմա 3 Խոցելի տուժողներ և երկրորդային վիկտիմիզացիա

Հոգեբանական և իրավական պաշտպանություն, սահմանափակումներ և փակ դատավարությունների հիմք

Թեմա 4 Միջազգային և համադրողական փորձ

Գերմանիայի, Ֆրանսիայի, ԱՄՆ-ի և այլ երկրների օրենսդրություն

Թեմա 5 Քաղաքացիական հայցը քրեական գործի շրջանակում

Վնասի փոխհատուցում, դատախազի դերը, վնասի ապացուցման մեխանիզմներ

Թեմա 6 Տուժողի իրավունքները ՄԻԵԴ պրակտիկայում

ԵՄ իրավունքի և ՄԻԵԴ որոշումների վերլուծություն

Թեմա 7 Գործնական վարժանքներ և սեմինարներ

Թեմատիկ դեպքերի ուսումնասիրություն, դատական որոշումների քննություն

Թեմա 8 Ինքնուրույն աշխատանք

Գրավոր աշխատանքներ, զեկույցներ, ռեֆերատներ

Հիմնական գրականություն

- ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք
- ՄԻԵԴ որոշումներ տուժողների իրավունքների վերաբերյալ
- Թումասյան Դ., Յորդաշ Ռ. «Խոցելի տուժողների և վկաների մասնակցությամբ քննության առանձնահատկությունները»
- ԵԽ 1985թ. թիվ R(85)11 հանձնարարական
- Դասախոսական նյութեր և ՀՀ դատական պրակտիկա